բերին 'ի Հայս զսահմանս Ժողովոյն Քաղկեդոնի, այլ նոքա ոչ ընկալան զնա։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վանօրայք Հայոց Յերուսաղէմ։ Անաստաս Վարդապետ։ Հայ Հռոմայ։

ԿԱՐԳԵՍՑՈՒՔ ասատանօր ըստ կանխագոյն խոստման մերոյ՝ զեկեղեցիս և զմենաստանս, որք կանգնեցան Յերուսաղէմ 'ի զանազան ժամանակս 'ի թագաւորէն Տրդատայ, 'ի Հայրապետաց եւ 'ի Նախարարաց ազգիս։ զի առ Ջերմեռանդ փափաքանաց բազմութեան Ուխտաւորաց յաճախելոց անդր 'ի դէպ իսկ էր բազմացուցանել զեկեղեցիս և զմենաստանս 'ի Պաղեստին ըստ զանազան ցեղիցն 'ի դիւրութիւն նոցին։ ուր էին բազմութիւն Կրօնաւորաց հոգեւոր տեսչաւ նոցին, սահմանեալ 'ի սէտս նոցա գիւղս և ագարակս, որոյ շահեկան արդիւնքն առաքէին տմ ըստ ամէ Յերուսաղէմ 'ի հաստատութիւն վանօրէից և եկեղեցեաց։ Սակայն այս բարեկարգութիւն ոչ տեւեաց ընդ երկար, զի բաց 'ի Քաղկեդոնի Ժողովոյն յորում հալածանս կրեցին վանականք Հայոց, աւերեցաւ նաեւ աշխարհն Հայոց յերեսաց հինից և ասպատակաց, և պակասեցան թոշակք նոցին։ Դիցուք արդ զոր աւանդէ Անաստաս վարդապետ ոմն, և 'ի ստորեւ [1] նոցին 'ի կարգի ծանօթութեանց թուանշանօք զբանս Մովսիսի Կաղանկայտուացոյ, զոր յանուն Աղվանից վերագրէ։ և նշանակեսցուք զտեղիս ոմանց վանօրէից, որք այժմ յայտնի երեւին։

Տեառն Անաստասայ բարեշնորհ վարդապետի գրեալ յայտարարութիւնս 'ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համազասպայ Կամսարականի Պալհավունոյ, որ կամէր գնալ Յերուսաղէմ։

---

[1] Վասն այնց որ Յերուսաղէմ են շինեալ Յաղվանից անուն, զոր յերանելւոյն Անաստասայ առ Վահրամ Մամիկոնեան ուսաք, այս են։ Պոռ. Մով. Կաղանկայտ. Գլ. ԺԲ. Երես 425։